բանց սրտին, ուր մեծացել էին: Կլիման էլ աւելի մեղմ էր, իսկ հողը՝ արգասաբեր»: «Քիչ է պատահում, որ այստեղ (Աբարան) ցանքսը մէկին երկուսից աւելի արդիւնք տայ», զանգատուել են գիւղացիք: Պակասը լրացրել են պետական հարկահանները, քերթելով գիւղացու կաշին: «Թէեւ մենք գոհ ենք, որ ռուս կայսեր հպատակներն ենք այժմ», շարունակել են գիւղացիք, «որովհետեւ նա քրիստոնեայ պետ է եւ յարգում է մեր հաւատը ու մեր եկեղեցին, պաշտպանում մեր քահանաներին, թէեւ մենք ատում ենք տաճիկներին եւ վախում քրդերից, բայց եւ այնպէս կ'ուզէինք նորէն այնտեղ ապրել, մեր հին բնակավայրերում, ուր մենք չէինք զգում քաղց, ուր հողը այսչափ անպտուղ չէր, եւ ոչ էլ կլիման այստեղի պէս դաժան: Այնտեղ մենք ի վիճակի էինք գոհացնելու հայկահաւաքներին, որով վախ չունէինք, թէ շարունակ ծեծ կ'ուտենք, ինչպէս սովոր են անել ռուսները: Եւ առհասարակ այնտեղ երբեք այնպէս դառն խեղճութեան մէջ չենք ապրել, ինչպէս այստեղ»:

Ոչ միայն Բազարչըբցիք — դեռ դա ամենահարուստ գիւղն է եղել — այլ նաեւ Արագածի լանջերին թառած միւս գիւղերի բնակիչները (24 հայկ. գիւղեր, 1700 ընտանիք) նոյն գանգատներն են արել իրենց վիճակի մասին:

* * *

Արարանից Վազներ եւ Աբովեան անցնում են Գիւմրի (Ալեքսանդրապոլ): Քաղաքի բնակիչների թիւը Վ. հաշւում է 6000 շունչ, գաղթած մեծ մասամբ Տաճկաստանից:

Ալեքսանդրապոլը համարուել է Անդրկովկասի «ամենալաւ բերդը», յարմարեցուած 60,000-անոց բերդապահ զօրքի համար:

Ժողովրդի կենցաղի մասին մանրամասնութիւններ չենք լսում:

Ալեքսանդրապոլից ճանապարհը շարունակում են դէպի Թիֆլիս: Փոստային խճուղին ձգւում էր Դիլիջանի վրայով: Վազներ նախընտրում է Զալալ-Օղլիի ճամբան, ձիով: Անցնում են Համամլուով ու Ղըշլաղով: Ճամբան անվտանգ չէ եղել թաթար աւազակախմբերի ձեռից: Անցնում են լեռնանցքը, իջնում Լօռի: Զալալ-Օղլիում օթեւանում են Սահակով անունով մի հայի տունը, որն ըստ երեւոյթին սպասուած ընդունելութիւնը չէ ցոյց տալիս հիւրերին:

Վազներ զարմանքով դիտում է, որ քօղածածկ հայ կինը քաշւում է՝ իր երեսը ցոյց տալու օտար հիւրին, բայց ոչ նոյնպիսի խըստութեամբ՝ նոյն այդ հիւրի ծառային եւ կամ առհասարակ ծառաների: Աբովեան բացատրում է այդ «տարօրինակ երեւոյթը». թէ՝ դա մեծարելի, դիրքի տէր օտարի հանդէպ յարգանքի ու պատկառանքի նշան է եւ ոչ թէ նախանձի կամ խանդի, ընտանիքի մեծի կողմից:

Աբովեան պատմել է Վազներին, թէ մինչեւ իսկ իր հայրական տան մէջ իրեն այժմ մի տեսակ օտար մարդ են համարում եւ ամօթխածութեամբ ու պատկառանքով վերաբերւում,— այն օրից սկսած, երբ նա Դորպատից որպէս ուսեալ մարդ վերադարձել է եւ ռուս պաշտօնեայի աստիճան ստացել. թէ՝ մինչեւ անգամ իր հարազատ մայրը եւ եղբայրը այլեւս առաջուան նման սրտաբաց ու ազատ չեն եղել հետը, այլ միշտ էլ քաշուել են նրանից:

«Մինչեւ իսկ Աբովեանի մայրը քաշուելիս է եղել որդու առաջ երեւալ՝ բաց երեսով: Իր հայրական տանը Աբովեանի վրայ նայելիս են եղել որպէս պատկառելի օտարականի վրայ, որով նրանք թէեւ հպարտանալ կարող էին, բայց որի վրայ այլեւս առաջուան նման նայել չեն կարողացել որպէս որդու ու եղբօր վրայ, հակառակ նրա, Աբովեանի, անփոփոխ ու ջերմ սիրուն իր ընտանիքի անդամների հանդէպ»:

Ճանապարհը շարունակելով, ճամբորդները Եկատերինֆելդի վրայով մտնում են Վրաստան եւ ի վերջոյ հասնում Թիֆլիս: Սրանով էլ Վազներ վերջացնում է իր «Ուղեւորութիւն դէպի Արարատ եւ Հայկական բարձրաւանդակ» աշխատութիւնը:

* * *

Նոյն հեղինակը մի ուրիշ աշխատութիւն էլ ունի Վրաստանին նուիրուած (Reise nach Kolchis, Լայպցիգ 1850 թ.):

Թիֆլիսին վերաբերեալ հատուածներից տեղեկանում ենք, որ հեղինակը, հիմնուելով պաշտօնական «վիճակագրական տուեալի վրայ», քաղաքի տների թիւը հաշւում է 3662: 37-ը եղել են կառավարական շէնքեր, 572-ը պատկանել են հոգեւորականութեան, մնա-